ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայություններ բաժնի (այսուհետ՝ Բաժին) փորձագետ Հասմիկ Վեզիրյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

- պատրաստել եմ քաղաքացիների դիմումների, այդ թվում առցանց ստացված դիմումների, ինչպես նաև ՀՀ վարչապետի, ՀՀ նախագահի աշխատակազմերից և այլ մարմիններից ՀՀ ԱՍՀՆ վերահասցեագրված քաղաքացիների դիմումների պատասխանները և ապահովել դրանց համապատասխան ընթացքը,
- պատրաստել եմ մի շարք պաշտոնական գրությունների նախագծեր՝ նախարարություններ, գերատեսչություններ և կազմակերպություններ ներկայացնելու համար, ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականների, այլ պետական և ոչ պետական մարմիններից ստացված գրությունների պատասխանների նախագծեր,
- մասնակցել եմ «Ծրագրերը որպես սոցիալական որակելու չափանիշները և ընթացակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 7-ի N 435-Լ որոշումներում լրացումներ և

փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի և այլ նախագծերի մշակման աշխատանքներին,

- մշակել և պաշտոնական շրջանառության մեջ եմ դրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 90-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 8-ի N 148-Լ որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1924-Լ և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2082-Լ որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 13-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության, «Երևանի պահածոների գործարան» ՓԲԸ-ում 2022 թվականի օգոստոսի 14-ին տեղի ունեցած պայթյունի հետևանքով զոհերի ընտանիքներին և վիրավորում (խեղում, վնասվածք) ստացած անձանց սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,
- մասնակցել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշման շրջանակներում իրականացվող ծրագրի շահառուներին հավաստագրեր տրամադրելու աշխատանքերին,
- մասնակցել եմ նախարարության և այլ կառույցների միջև կնքվող հուշագրերի, համաձայնագրերի մշակման աշխատանքերին,
- բաժնի պետի հանձնարարությամբ կազմել եմ գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր,

- բաժնի պետի հանձնարարությամբ կատարել եմ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

ՀԱՍՄԻԿ ՎԵՁԻՐԱՅԱՆ

Կատարված աշխատանքները
ճշգրիտ են գրանցված:
Հ. Հարությունյան